ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

21.01.2022թ.
Ժամը 11[10]

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ՝ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
«Զինուժ Մեդիա» ՊՀ ՏՏ և դիզայնի բաժանմունքի պետ՝ Ա. Մովսեսյան,
ՀՀ ՊՆ Տ և ՀԿԳՎ կազմակերպչական բաժնի պետ՝ Կ. Պողոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ՝ Է. Համբարձումյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Պողոսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Դավթյան» ՍՊԸ
2	«ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
3	«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Դավթյան» ՍՊԸ-ի և «ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի՝ հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Մասնավորապես՝

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 21.01.2022թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: 25.01.2022թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցը, սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել երեք մասնակից.

Մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են ստորև աղյուսակում՝

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				Դատողություն
					անվանումները	գնային առաջարկները			
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը	
1	Համակարգի օժանդակ ծառայություններ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ պաշտոնական կայքի և «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկի կայքերի սպասարկում, բջջային հավելվածի սպասարկում, գրավոր թարգմանության ծառայություն	դրամ	1	10,000,000	«Դավթյան» ՍՊԸ	14000000	0	14000000	Բանակցություն
					«ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	9850000	0	9850000	
					«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ	9999900	0	9999900	
2	Համացանցային ծառայություններ մատուցողներ(isp), այդ թվում՝ Համացանցային ռեսուրսի տրամադրում	դրամ	1	1,152,000	—	—	—	—	Հայտեր չկան

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգով գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ հիման վրա, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 31.01.2022թ. ժամը 14:45-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ բոլոր մասնակիցների հետ: Նշված օրը և ժամին բանակացություններին ներկայացան «Դավթյան» ՍՊԸ-ն և «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ-ն: «ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ն չներկայացավ բանակցություններին,հետևաբար «ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գինը մնաց առանց փոփոխության:

«Դավթյան» ՍՊԸ -ն 1-ին չափաբաժնի մասով գինը նվազեցրեց առաջարկելով՝ 9 200 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի):

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով գինը նվազեցրեց առաջարկելով՝ 9 450 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

4.1 03.02.2022թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Դավթյան» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.3 Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝ Հ. Մելիքյան

Գնահատող՝ Ա. Մովսեսյան

Գնահատող՝ Կ. Պողոսյան

Գնահատող՝ Է. Համբարձումյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան